2012-10-11

Case Summary posted by the Task Force on Access to Justice

ARMENIA: 22 residents of the Kapan city (Armenia) v. Armenian Sewerage Company

1. Key issue	Residents of the Kapan city in Armenia brought a collective lawsuit before the court of first instance against Armenian Sewerage Company, requiring the company to provide for wastewater treatment and discharge in accordance with the agreement as well as to undertake measures to exclude the risk to the environment and the human health. The court accepted and satisfied the claim ofthe residents.
2. Country/Region	Armenia
3. Court/body	General Jurisdiction Court of First Instance of Syunik Region of Armenia. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
4. Date of judgment	2011-03-24
5. Internal reference	ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռ Սյունիքի մարզ, 24 մարտի 2011 թվական, ՍԴ//0799/02/10
6. Articles of the Aarhus Convention	Art. 9, para. 3
7. Key words	Access to justice, legal standing, members of the public.

8. Case summary

22 residents, with legal assistance from the local non-governmental organization “For Ensuring Ecological Safety and Developing Democracy”, brought a case against Armenian Sewerage Company to enforce the Company to operate in compliance with its obligations under the contract with the residents, particularly to provide for wastewater treatment and discharge without posing risks to the environment and human health. The lawsuit was brought by the residents in order to effectively overcome the impediments of standing for non-governmental organizations.

In its judgment, the Court stated ”....According to the contract (model contract for all consumers) signed with the applicants, the Company is obliged to provide wastewater treatment and discharge. (…) However, based on the evidences, e.g. the communication between the non-governmental organization and the Company, and the testimonies, the Court finds the Company to be in non-compliance with the contract.” The Court also pointed to the fact that the dissatisfactory condition of the Kapan city sewage system was confirmed by the letter of the Head of the Community Council and that in other parts of the city the cleaning activities of the waste collectors were in process. The letter stated as well that a part of the Kapan city sewer collector was completely demolished. Accordingly, the Court required the Company to fulfill its contract obligations towards the residents. It is expected that the implementation of the judgment will have a positive impact for all residents of the Kapan city.

9. Link address	http://datalex.am/dl_case_view_page.php?caseType=2&courtID=126&caseID=35465847065547668 (in Armenian) The text in Armenian is enclosed.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

24 մարտի 2011թ. ք.Կապան
Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0799/02/10թ.

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը դռնբաց դատական նիստում
Նախագահությամբ՝ Վոլոդյա Մանասարյանի
Մասնակցությամբ՝ Քարտուղարությամբ՝ Հերմինե Առաքելյանի
Հայցվոր՝ Արթուր Բորիկի Ղազարյանի
/անձնագիր AE 0470026, տրված 16.09.1999թ-ին 041-ի կողմից /
Հայցվորների
ներկայացուցիչ՝ Արշավիր Խալափյանի
/անձնագիր AC 0546944, տրված 22.12.1998թ-ին 041-ի կողմից, փաստաբանական արտոնագիր թիվ 731, լիազորագրեր տրված 04.10.2010թ-ին/
Պատասխանողի
ներկայացուցիչներ՝ 1.Վալերիկ Խաչատրյանի /անձնագիր AA 0498013, տրված 19.07.1996թ-ին 051-ի կողմից, լիազորագիր տրված 21.12.2010թ-ին/
2.Հովհաննես Գևորգյանի /անձնագիր AA 0275090, տրված 05.12.1995թ-ին 041-ի կողմից, լիազորագիր տրված 21.12.2010թ-ին/

քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Քաջիկ Զավենի Մարգարյանի, Աննա Նապոլեոնի Հակոբյանի, Հայկանդուխտ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Վարսենիկ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Մարսելա Արտեմի Հակոբյանի, Արթուր Բորիկի Ղազարյանի, Լարիսա Արտեմի Հակոբյանի, Արշավիր Սերժիկի Խալափյանի, Ալիկ Ստեփանի Ղոնյանի, Լիզա Պյոտրի Հարությունյանի, Հայրապետ Արտուշի Թևանյանի, Արտուր Հայրապետի Թևանյանի, Բորիկ Բագրատի Ղազարյանի, Աշոտ Միշայի Բալայանի, Արամայիս Արտեմի Հակոբյանի, Արմեն Ռազմիկի Խաչատրյանի, Ռուզաննա Ռաֆայելի Ղազարյանի, Մերի Բաբկենի Ավետիսյանի, Լուսինե Հրանտի Գրիգորյանի, Տիգրան Ալյոշայի Գրիգորյանի, Վահագն Տիգրանի Գրիգորյանի և Գոհարիկ Արտեմի Միրզոյանի ընդդեմ □Հայջրմուղկոյուղի□ փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագային պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուն և մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը վերացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը. Հայցվորներ Քաջիկ Զավենի Մարգարյանը, Աննա Նապոլեոնի Հակոբյանը, Հայկանդուխտ Հովհաննեսի Հովհաննիսյանը, Վարսենիկ Հովհաննեսի Հովհաննիսյանը, Մարսելա Արտեմի Հակոբյանը, Արթուր Բորիկի Ղազարյանը, Լարիսա Արտեմի Հակոբյանը, Արշավիր Սերժիկի Խալափյանը, Ալիկ Ստեփանի Ղոնյանը, Լիզա Պյոտրի Հարությունյանը, Հայրապետ Արտուշի Թևանյանը, Արտուր Հայրապետի Թևանյանը, Բորիկ Բագրատի Ղազարյանը, Աշոտ Միշայի Բալայանը, Արամայիս Արտեմի Հակոբյանը, Արմեն Ռազմիկի Խաչատրյանը, Ռուզաննա Ռաֆայելի Ղազարյանը, Մերի Բաբկենի Ավետիսյանը, Լուսինե Հրանտի Գրիգորյանը, Տիգրան Ալյոշայի Գրիգորյանը, Վահագն Տիգրանի Գրիգորյանը և Գոհարիկ Արտեմի Միրզոյանը 2010թ-ի հոկտեմբերի 20-ին հայցադիմում են ներկայացրել դատարան ընդդեմ □Հայջրմուղկոյուղի□ փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագային պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուն և մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը վերացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին՝ նշելով, որ Կապան քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման հանրային ծառայությունը մատուցվում է պատասխանող □Հայջրմուղկոյուղի□ փակ բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից, իսկ տվյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բնակչության հետ կնքվում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման մասին պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/. որի համաձայն ջրամատակարարն իր ջրամատակարարման համակարգին միացված ցանցի /կամ ընդհանուր օգտագործման ծորակի/ միջոցով բաժանորդին մատակարարում է պետական ստանդարտների պահանջներին համապատասխան խմելու ջուր իր ջրահեռացման համակարգով հեռացնում ու մաքրում է կենցաղային կեղտաջուրը, իսկ բաժանորդն օգտագործում է մատակարարված ջուրը, կենցաղային կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ և մատակարարված ջրի ու հեռացված կեղտաջրերի դիմաց վճարները ջրամատակարարին վճարում է Պայմանագրով սահմանված կարգով: Պատասխանող Ընկերությունը չի կատարել պայմանագրային պարտավորությունները, որի հետևանքով պատճառել է նյութական վնաս և առաջացնում է ծանր բնապահպանական խնդիրներ: Այսպես՝ պատասխանող Ընկերությունը կենցաղային կեղտաջրերը համապատասխան խողովակաշարով հեռացնելու, այն մաքրման կայան հասցնելու ու մաքրելու փոխարեն բաժանորդից ընդունված և հեռացված կոյուղու կեղտաջրերը կենտրոնական համակարգից անմիջապես լցնում է Կապան քաղաքի Ողջի գետը՝ քաղաքի ամբողջ երկայնքով, որի հետևանքով բնապահպանական լուրջ հիմնախնդիր է առաջացել, այն է՝ հատկապես ամառային տաք օրերին Ողջի գետից տհաճ հոտ է գալիս, Ողջի գետից տեղական

բնակչությունը ձկնորսություն է անում, Ողջի գետի թունավորված ջրերով ջրվում են Կապան քաղաքի վարչական տարածքում գտնվող ափամերձ հողամասերը, Ողջի գետի հոսանքով գտնվող Սյունիք գյուղի այգիներն ու բանջարանոցները, իսկ նշված հողամասերից ստացված բերքը օգտագործում է ազգաբնակչությունը: Տվյալ փաստերի վրա ուշադրություն հրավիրելու համար դիմել են պատասխանող Ընկերությանը, ՀՀ Սյունիքի մարզի տարածքային բնապահպանական տեսչությանը և ՀՀ բնապահպանության նախարարությանը, որոնք իրենց պատասխաններով ընդունել են, որ Կապան քաղաքում չի գործում կոյուղաջրերի հեռացման և մաքրման համակարգը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանող Ընկերությունը հրաժարվում է կարգավորել վերը նշված խնդիրները՝ դրանով իսկ չկատարելով Պայմանագրով իր կողմից ստանձնած պարտավորությունները՝ հայցվորներ Քաջիկ Մարգարյանը, Աննա Հակոբյանը, Հայկանդուխտ Հովհաննիսյանը, Վարսենիկ Հովհաննիսյանը, Մարսելա Հակոբյանը, Արթուր Ղազարյանը, Լարիսա Հակոբյանը, Արշավիր Խալափյանը, Ալիկ Ղոնյանը, Լիզա Հարությունյանը, Հայրապետ Թևանյանը, Արտուր Թևանյանը, Բորիկ Ղազարյանը, Աշոտ Բալայանը, Արամայիս Հակոբյանը, Արմեն Խաչատրյանը, Ռուզաննա Ղազարյանը, Մերի Ավետիսյանը, Լուսինե Գրիգորյանը, Տիգրան Գրիգորյանը, Վահագն Գրիգորյանը և Գոհարիկ Միրզոյանը դիմել են դատարան՝ խնդրելով պատասխանող Ընկերությանը պարտավորեցնել կատարելու Պայմանագրով ստանձնած վերը նշված պարտավորությունները և վերացնելու մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:

Հայցվորներ Քաջիկ Մարգարյանը, Աննա Հակոբյանը, Հայկանդուխտ Հովհաննիսյանը, Վարսենիկ Հովհաննիսյանը, Մարսելա Հակոբյանը, Արթուր Ղազարյանը, Լարիսա Հակոբյանը, Արշավիր Խալափյանը, Ալիկ Ղոնյանը, Լիզա Հարությունյանը, Հայրապետ Թևանյանը, Արտուր Թևանյանը, Բորիկ Ղազարյանը, Աշոտ Բալայանը, Արամայիս Հակոբյանը, Արմեն Խաչատրյանը, Ռուզաննա Ղազարյանը, Մերի Ավետիսյանը, Լուսինե Գրիգորյանը, Տիգրան Գրիգորյանը, Վահագն Գրիգորյանը և Գոհարիկ Միրզոյանը որպես պահանջը հիմնավորող ապացույցներ դատարանին են ներկայացրել հայցվորներ Մարսելա Հակոբյանի, Արթուր Ղազարյանի, Լարիսա Հակոբյանի, Բորիկ Ղազարյանի, Աշոտ Բալայանի, Արամայիս Հակոբյանի և Արմեն Խաչատրյանի հետ կնքված Պայմանագրերը, □Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□ հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հունիսի 18-ին պատասխանող Ընկերությանն ուղարկված և 2009թ-ի հուլիսի 27-ին ՀՀ բնապահպանության նախարարին ուղարկված գրությունները, պատասխանող Ընկերության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին կազմված պատասխանը և ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2010թ-ի հունվարի 12-ին կազմված պատասխանը:

Հայցադիմումը 2010թ-ի հոկտեմբերի 22-ին ընդունվել է վարույթ, որը պատշաճ ձևով

ուղարկվել է կողմերին: Կողմերը պատշաճ ձևով ծանուցվել են դատական նիստի ժամանակի և վայրի մասին:
Պատասխանող Ընկերությունը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում հայցադիմումի պատասխան չի ներկայացրել:
2011թ-ի փետրվարի 17-ին կայացած դատաքննության ժամանակ պատասխանող Ընկերության ներկայացուցիչ Հովհաննես Գևորգյանը դատարանին է ներկայացրել թիվ 000238 և 000239 ջրօգտագործման թույլտվությունները և Կապանի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից 2010թ-ի փետրվարի 17-ին տրված գրությունը: Սույն քաղաքացիական գործով նախնական դատական նիստ չի նշանակվել:

2.Հայցվորի և հայցվորների ներկայացուցչի իրավական դիրքորոշումները.
Դատաքննությամբ հայցվոր Արթուր Ղազարյանը և հայցվորներ Քաջիկ Մարգարյանի, Աննա Հակոբյանի, Հայկանդուխտ Հովհաննիսյանի, Վարսենիկ Հովհաննիսյանի, Մարսելա Հակոբյանի, Լարիսա Հակոբյանի, Ալիկ Ղոնյանի, Լիզա Հարությունյանի, Հայրապետ Թևանյանի, Արտուր Թևանյանի, Բորիկ Ղազարյանի, Աշոտ Բալայանի, Արամայիս Հակոբյանի, Արմեն Խաչատրյանի, Ռուզաննա Ղազարյանի, Մերի Ավետիսյանի, Լուսինե Գրիգորյանի, Տիգրան Գրիգորյանի, Վահագն Գրիգորյանի և Գոհարիկ Միրզոյանի ներկայացուցիչ, հայցվոր Արշավիր Խալափյանը պնդեցին հայցը և ներկայացրեցին հետևյալ փաստարկները՝
Հայցվորներ Մարսելա Հակոբյանի, Արթուր Ղազարյանի, Լարիսա Հակոբյանի, Բորիկ Ղազարյանի, Աշոտ Բալայանի, Արամայիս Հակոբյանի և Արմեն Խաչատրյանի հետ կնքված Պայմանագրերի 1.1 կետի համաձայն ջրամատակարարն իր ջրամատակարարման համակարգին միացված ցանցի /կամ ընդհանուր օգտագործման ծորակի/ միջոցով բաժանորդին մատակարարում է պետական ստանդարտների պահանջներին համապատասխան խմելու ջուր իր ջրահեռացման համակարգով հեռացնում ու մաքրում է կենցաղային կեղտաջուրը, իսկ բաժանորդն օգտագործում է մատակարարված ջուրը, կենցաղային կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ և մատակարարված ջրի ու հեռացված կեղտաջրերի դիմաց վճարները ջրամատակարարին վճարում է Պայմանագրով սահմանված կարգով: Նույն Պայմանագրերի 2.2.1 կետի համաձայն ջրամատակարարը պարտավորվում է ոչ շուրջօրյա ջրամատակարարման դեպքում /հաստատված ջրամատակարարման ժամանակացույցով/ ապահովել բաժանորդի ամենօրյա ժամային ջրամատակարարումը և բաժանորդից իր տնօրինության ջրահեռացման համակարգ ընդունել ու հեռացնել կենցաղային կեղտաջրերը, իսկ 2.2.2 կետի համաձայն ջրամատակարարը պարտավորվում է պահպանել կողմերի տնօրինության ջրամատակարարման համակարգերի սահմանազատման կետում մատակարարվող ջրի որակն ըստ գործող պետական ստանդարտների պահանջների, և ապահովել կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը:
□Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□ հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հունիսի 18-ին պատասխանող

Ընկերությանն ուղարկված գրության հիման վրա պատասխանող Ընկերության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին կազմված պատասխանի համաձայն հայտնվել է, որ □իրոք, տեխնիկական անբավարար վիճակում է գտնվում նաև ջրահեռացման համակարգը: Այդ կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ Կապան քաղաքի թաղամասերից կոմունալ-կենցաղային կեղտաջրերը հեռացվում են մոտ 120 կմ երկարությամբ, 150-800 մմ տրամագծի ջրահեռացման համակարգի միջոցով, որը միացված է Թղջի գետի երկայնքով ծգվող 400-800 մմ տրամագծի /կառուցվել է մոտ 40 տարի առաջ, հիմնականում պողպատե խողովակներով/ գլխավոր կոլեկտորին: Տեխնիկապես քայքայված և վթարային վիճակում են գտնվում հատկապես գլխավոր կոլեկտորի պողպատե խողովարկներով կառուցված հատվածները: Ներկայումս գլխավոր կոլեկտորով հեռացված կեղտաջրերը առանց մաքրման /ինչպես հանրապետության մնացած քաղաքներում է կատարվում/ լցվում են գետը՝ մի մասը քաղաքի տարածքից դուրս, իսկ մնացածը /□Բաղաբերդ□, □Հունան□, □Ձորք□ և այլ բարձրադիր թաղամասերի կեղտաջրերը, գլխավոր կոլեկտորի քայքայվածության, տեղ-տեղ բացակայության հետևանքով/՝ անմիջապես քաղաքի տարածքի կենտրոնական հատվածում□:
□Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□ հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին ՀՀ բնապահպանության նախարարին ուղարկված գրության հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2010թ-ի հունվարի 12-ին կազմված պատասխանի համաձայն հայտնվել է, որ □ինչ վերաբերում է Կապան քաղաքի կոյուղու ոչ բարվոք վիճակի և առանց համապատասխան թույլտվության բաց ջրավազան /Ողջի գետ/ չմաքրված կեղտաջրերի արտահոսքերի մասին Ձեր կողմից բարձրացված հարցին, ապա տեղեկացնում ենք, Ձեզ, որ փաստերը որոշ չափով համապատասխանում են իրականությանը: Բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի կողմից իրականացվում են վերահսկողական աշխատանքներ՝ Կապանի ջրմուղկոյուղու կողմից խախտումները վերացնելու ուղությամբ իրականացվող միջոցառումների նկատմամբ: Աշխատանքների ավարտելուց հետո արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի Ձեզ□:

3.Պատասխանողի ներկայացուցիչների իրավական դիրքորոշումները. Դատաքննությամբ պատասխանող Ընկերության ներկայացուցիչներ Վալերիկ Խաչատրյանը և Հովհաննես Գևորգյանը առարկեցին հայցի դեմ՝ նշելով, որ պատասխանող Ընկերությունը չի խուսափում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումից, կատարել է Կապան քաղաքի կոյուղու խցանումների վերացման աշխատանքներ, վերացվել են մի շարք փողոցների կոլեկտորներից արտահոսքերը, իսկ մնացած աշխատանքները ընթացքի մեջ են և ժամանակի ընթացքում կկատարվեն ամբողջությամբ:

4.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Հետազոտելով վերը նշված ապացույցները և հայցվորի, հայցվորի ներկայացուցչի և պատասխանողի ներկայացուցիչների ցուցմունքները և գնահատելով դրանք իրենց համակցության մեջ, դատարանը գտնում է, որ սույն գործի համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝ Հայցվորներ Մարսելա Հակոբյանի, Արթուր Ղազարյանի, Լարիսա Հակոբյանի, Բորիկ Ղազարյանի, Աշոտ Բալայանի, Արամայիս Հակոբյանի և Արմեն Խաչատրյանի հետ կնքված Պայմանագրերը, որոնց 1.1 կետի համաձայն ջրամատակարարն իր ջրամատակարարման համակարգին միացված ցանցի /կամ ընդհանուր օգտագործման ծորակի/ միջոցով բաժանորդին մատակարարում է պետական ստանդարտների պահանջների համապատասխան խմելու ջուր իր ջրահեռացման համակարգով հեռացնում ու մաքրում է կենցաղային կեղտաջուրը, իսկ բաժանորդն օգտագործում է մատակարարված ջուրը, կենցաղային կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ և մատակարարված ջրի ու հեռացված կեղտաջրերի դիմաց վճարները ջրամատակարարին վճարում է Պայմանագրով սահմանված կարգով: Նույն Պայմանագրերի 2.2.1 կետի համաձայն ջրամատակարարը պարտավորվում է ոչ շուրջօրյա ջրամատակարարման դեպքում /հաստատված ջրամատակարարման ժամանակացույցով/ ապահովել բաժանորդի ամենօրյա ժամային ջրամատակարարումը և բաժանորդից իր տնօրինության ջրահեռացման համակարգ ընդունել ու հեռացնել կենցաղային կեղտաջրեր, իսկ 2.2.2 կետի համաձայն ջրամատակարարը պարտավորվում է պահպանել կողմերի տնօրինության ջրամատակարարման համակարգերի սահմանազատման կետում մատակարարվող ջրի որակն ըստ գործող պետական ստանդարտների պահանջների, և ապահովել կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը: □Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□ հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հունիսի 18-ին պատասխանող Ընկերությանը հայցվորի կողմից ուղարկված գրության հիման վրա պատասխանող Ընկերության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին կազմված պատասխանը, որի համաձայն հայտնվել է, որ □իրոք, տեխնիկական անբավարար վիճակում է գտնվում նաև ջրահեռացման համակարգը: Այդ կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ Կապան քաղաքի թաղամասերից կոմունալ-կենցաղային կեղտաջրերը հեռացվում են մոտ 120 կմ երկարությամբ, 150-800 մմ տրամագծի ջրահեռացման համակարգի միջոցով, որը միացված է Թղջի գետի երկայնքով ծգվող 400-800 մմ տրամագծի /կառուցվել է մոտ 40 տարի առաջ, հիմնականում պողպատե խողովակներով/ գլխավոր կոլեկտորին: Տեխնիկապես քայքայված և վթարային վիճակում են գտնվում հատկապես գլխավոր կոլեկտորի պողպատե խողովարկներով կառուցված հատվածները: Ներկայումս գլխավոր կոլեկտորով հեռացված կեղտաջրերը առանց մաքրման /ինչպես հանրապետության մնացած քաղաքներում է կատարվում/ լցվում են գետը՝ մի մասը քաղաքի տարածքից դուրս, իսկ մնացածը /□Բաղաբերդ□, □Հունան□, □Ձորք□ և այլ բարձրադիր թաղամասերի կեղտաջրերը, գլխավոր կոլեկտորի քայքայվածության, տեղ-տեղ բացակայության հետևանքով/՝ անմիջապես քաղաքի տարածքի կենտրոնական հատվածում□:

□Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□ հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին ՀՀ բնապահպանության նախարարին հայցվորի կողմից ուղարկված գրության հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2010թ-ի հունվարի 12-ին կազմված պատասխանը, որի համաձայն հայտնվել է, որ □ինչ վերաբերում է Կապան քաղաքի կոյուղու ոչ բարվոք վիճակի և առանց համապատասխան թույլտվության բաց ջրավազան /Ողջի գետ/ չմաքրված կեղտաջրերի արտահոսքերի մասին Ձեր կողմից բարձրացված հարցին, ապա տեղեկացնում ենք, Ձեզ, որ փաստերը որոշ չափով համապատասխանում են իրականությանը: Բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի կողմից իրականացվում են վերահսկողական աշխատանքներ՝ Կապանի ջրմուղկոյուղու կողմից խախտումները վերացնելու ուղությամբ իրականացվող միջոցառումների նկատմամբ: Աշխատանքների ավարտելուց հետո արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի Ձեզ□:

Թիվ 000238 և 000239 ջրօգտագործման թույլտվությունները, որոնց համաձայն պատասխանող Ընկերությանը թույլատրվել է իրականացնելու ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի վարչական տարածքի ջրամատակարարումը և այլ տիպի գործողություններ:

Կապանի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից 2010թ-ի փետրվարի 17-ին տրված գրությունը, որի համաձայն հայտնվել է, որ պատասխանող Ընկերությունը կատարել է Կապան քաղաքի կոյուղու կոլեկտորի խցանումների վերացման աշխատանքներ, որի արդյունքում վերացվել են Հ.Ավետիսյան, Մ.Ստեփանյան և Գ.Արզումանյան փողոցների կոլեկտորներից արտահոսքերը: Տվյալ պահին քաղաքի մյուս փողոցներով անցնող կոլեկտորների մաքրման աշխատանքները շարունակվում են:

5.Դատարանի իրավական վերլուծությունը.

Վերլուծելով և գնահատելով հետազոտված ապացույցները, համադրելով դատարանի կողմից հաստատված փաստերը և յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը հանգեց այն հետևության, որ հայցը ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին կետի համաձայն պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:
Դատարանը գործում առկա Պայմանագրերով, որը, ի դեպ, հանդիսանում է օրինակելի ձև և պատասխանող Ընկերությունը նույնատիպ Պայմագրեր է կնքել մյուս բոլոր բաժանորդների հետ, հաստատված է համարում այն փաստը, որ պատասխանող Ընկերությունը ստանձնել է պարտավորություններ, մասնավորապես՝ Պայմանագրերի 1.1 կետի համաձայն ջրամատակարարը՝ պատասխանող Ընկերությունը իր ջրամատակարարման համակարգին միացված ցանցի /կամ ընդհանուր օգտագործման ծորակի/ միջոցով բաժանորդին մատակարարում է պետական ստանդարտների պահանջներին համապատասխան խմելու ջուր իր ջրահեռացման համակարգով հեռացնում ու մաքրում է կենցաղային կեղտաջուրը, 2.2.1 կետի համաձայն ջրամատակարարը՝ պատասխանող Ընկերությունը պարտավորվում է ոչ շուրջօրյա ջրամատակարարման դեպքում /հաստատված ջրամատակարարման ժամանակցույցով/ ապահովել բաժանորդի ամենօրյա ժամային ջրամատակարարումը և բաժանորդից իր տնօրինության ջրահեռացման համակարգ ընդունել ու հեռացնել կենցաղային կեղտաջրեր, իսկ 2.2.2 կետի համաձայն ջրամատակարարը՝ պատասխանող Ընկերությունը պարտավորվում է պահպանել կողմերի տնօրինության ջրամատակարարման համակարգերի սահմանազատման կետում մատակարարվող ջրի որակն ըստ գործող պետական ստանդարտների պահանջների, և ապահովել կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը: Այսինքն՝ պատասխանող Ընկերությունը Պայմանագրերով ձեռք է բերել պարտավորություններ, որոնք ենթակա են կատարման:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408 հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը:
Դատարանը գործում առկա ապացույցներով և կողմերի ցուցմունքներով ապացուցված է համարում այն փաստը, որ պատասխանող Ընկերությունը չի կատարել իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունները, կատարել է միայն մասնակի, որի արդյունքում հայցվոր կողմին, մյուս բոլոր բաժանորդներին և բնությանը պատճառել է վնաս: Այսպես՝ □Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□ հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հունիսի 18-ին պատասխանող Ընկերությանը հայցվորի կողմից ուղարկված գրության հիման վրա պատասխանող Ընկերության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին կազմված պատասխանի և □Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□

հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին ՀՀ բնապահպանության նախարարին հայցվորի կողմից ուղարկված գրության հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2010թ-ի հունվարի 12-ին կազմված պատասխանի համաձայն թե պատասխանող Ընկերությունը և թե ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը ընդունել են, որ Կապան քաղաքի կոյուղին գտնվում է ոչ բարվոք վիճակում, այն է՝ տեխնիկապես քայքայված և վթարային վիճակում են գտնվում հատկապես գլխավոր կոլեկտորի պողպատե խողովարկներով կառուցված հատվածները, որի պատճառով գլխավոր կոլեկտորով հեռացված կեղտաջրերը առանց մաքրման լցվում են Ողջի գետը՝ մի մասը քաղաքի տարածքից դուրս, իսկ մնացածը /□Բաղաբերդ□, □Հունան□, □Զորք□ և այլ բարձրադիր թաղամասերի կեղտաջրերը, գլխավոր կոլեկտորի քայքայվածության, տեղ-տեղ բացակայության հետևանքով/՝ անմիջապես քաղաքի տարածքի կենտրոնական հատվածում: Միաժամանակ՝ պատասխանող Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված թերությունների վերացումը ընթացքի մեջ են և ժամանակի ընթացքում կկատարվեն ամբողջությամբ, որն էլ հերթական անգամ փաստում է, որ վերջիններս ընդունել են իրենց կողմից ստանձնած պարտավորությունների թերացումով կատարելու փաստը:
Այն որ Կապան քաղաքի կոյուղին գտնվում է ոչ բարվոք վիճակում հաստատվում է նաև Կապանի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից 2010թ-ի փետրվարի 17-ին տրված գրությամբ, որի համաձայն հայտնվել է, որ պատասխանող Ընկերությունը կատարել է Կապան քաղաքի կոյուղու կոլեկտորի խցանումների վերացման աշխատանքներ, որի արդյունքում վերացվել են Հ.Ավետիսյան, Մ.Ստեփանյան և Գ.Արզումանյան փողոցների կոլեկտորներից արտահոսքեր: Տվյալ պահին քաղաքի մյուս փողոցներով անցնող կոլեկտորների մաքրման աշխատանքները շարունակվում են:
Միաժամանակ՝ պետք է նշել, որ □Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման□ հասարակական կազմակերպության կողմից 2009թ-ի հուլիսի 27-ին ՀՀ բնապահպանության նախարարին հայցվորի կողմից ուղարկված գրության հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2010թ-ի հունվարի 12-ին կազմված պատասխանի համաձայն վերջիններս ընդունել են, որ պատասխանող Ընկերության կողմից բնությանը և շրջակա միաջավայրին հասցվել է վնաս /□ինչ վերաբերում է Կապան քաղաքի կոյուղու ոչ բարվոք վիճակի և առանց համապատասխան թույլտվության բաց ջրավազան /Ողջի գետ/ չմաքրված կեղտաջրերի արտահոսքերի մասին Ձեր կողմից բարձրացված հարցին, ապա տեղեկացնում ենք, Ձեզ, որ փաստերը որոշ չափով համապատասխանում են իրականությանը□ և □Բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի կողմից իրականացվում են վերահսկողական աշխատանքներ՝ Կապանի ջրմուղկոյուղու կողմից խախտումները վերացնելու ուղությամբ իրականացվող միջոցառումների նկատմամբ□/:

Փաստորեն՝ դատարանը հաստատված է համարում այն փաստը, որ պատասխանող Ընկերությունը խախտել է Պայմանագրերով իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունները, որի արդյունքում հայցվորներին, մյուս բաժանորդներին, բնությանը և շրջակա միջավայրին հասցվել է վնաս, որն էլ ենթակա է վերացման: Ելնելով վերոգրյալից՝ դատարանը գտնում է, որ հայցվոր կողմի հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման, այն է՝ պատասխանող Ընկերությանը պարտավորեցնել կատարելու Պայմանագրերով ստանձնած պարտավորությունները /մասնավորապես՝ ապահովել կենցաղային կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը/ և վերացնելու մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:

Քննության առնելով դատական ծախսերի հարցը դատարանը այն համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել:

Պատասխանող □Հայջրմուղկոյուղի□ փակ բաժնետիրական ընկերությանը պարտավորեցնել կատարելու բաժանորդների հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, այն է՝ ապահովել կենցաղային կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը:
Պատասխանող □Հայջրմուղկոյուղի□ փակ բաժնետիրական ընկերությանը պարտավորեցնել վերացնելու մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:
Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:
Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Վ.ՄԱՆԱՍԱՐՅԱՆ